ԴԵՊԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 50-ԱՄՅԱԿԸ

Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

ԲԱՆԱԿԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԵՐԿՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ (ՀՈԿՏԵՄԲԵՐ 1917 Թ.)

Հեղափոխական շարժման ընդհանուր վերելքի պայմաններում, Թիֆլիսում, 1917 թ. հոկտեմբերի 2-ին գումարվեց կովկասյան բոլշևիկների երկրային առաջին համագումարը։ Այն հսկայական դեր խաղաց երկրամասում և մասնավորապես կովկասյան բանակում բոլշևիկների գործունեության հետագա ակտիվացման և հեղափոխական շարժման ծավալման գործում։

Համագումարի աշխատանքների լուսաբանմանը տարբեր առիթներով անդրադարձել են բոլոր այն պատմաբանները, որոնք զբաղվել են 1917 թ. կովկասյան բուռն իրադարձությունների գիտական մշակման հարցերով[1]։ Սակայն հարցը ներկա ասպեկտով ուսումնասիրվում է առաջին անգամ։ Այդպիսի քննարկումը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ավելի ամբողջական ներկայացնելու համագումարը, այլև օգնում է պարզաբանելու կովկասյան բանակում բոլշևիկների գործունեության առանձնահատկությունները, մասշտաբները, արդյունքները։

Երկրամասի և կովկասյան ռազմաճակատի գրեթե բոլոր հիմնական զինվորական օջախները ներկայացված էին համագումարում։

Կուսակցության անդամների ստույգ վիճակագրության բացակայությունը մեզ զրկում է համագումարի շրջանում բանակային բոլշևիկների թիվը որոշակիորեն նշելու հնարավորությունից։ Կարծում ենք, որ երկրային համագումարի նախօրյակին կովկասյան բանակում բոլշևիկների թիվը հասնում էր մոտ 8—9000-ի, այն ժամանակ, երբ Կովկասի բոլշևիկների ընդհանուր թիվը հասնում էր 12—13000-ի։ Ամենաղուսպ հաշվումները այն համոզման են բերում, որ միայն Անդրկովկասում և կովկասյան ռազմաճակատում բանակային բոլշևիկների թիվը 6000-ից պակաս չէր[2]։ Կովկասի գլխավոր կենտրոններում, բացառությամբ Բաքվից, կուսակցական կազմակերպությունների բացարձակ մեծամասնությունը կազմված էր զինվորականներից։ Այդպես էր դրությունը Թիֆլիսում, որի «զինվորական» բոլշևիկյան կազմակերպության մեջ, ինչպես վկայում էր Ս. Քալթառաձեն կուսակցության VI համագումարում ունեցած իր զեկուցումում, հաշվվում էր 2675 հոգի։ Բաքվի 2500 բոլշևիկներից զինվորականներ

---

1 Համագումարին նվիրված առանձին աշխատությամբ հանդես են եկել Ռ. Լ. Մովսիսյանը (տե՛ս նրա «Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը և Ստեփան Շահումյանը», Երևան, 1955), և Կ. Բ. Ուզումյանը (տե՛ս նրա «ՌՍԴԲՊ(ռ) կովկասյան կազմակերպությունների համագումարը», Երևան, 1957։

2 Այս թիվը կարիք ունի հետագա ճշգրտման։

կլիներին հավանաբար 6—700-ը։ Գրոզնու (1800 հոգի) և Վլադիկավկազի (2000 հոգի) բոլշևիկների թվում բանակային բոլշևիկները կազմում էին մոտ կեսը։ Ալեքսանդրապոլի կազմակերպության 600 անդամներից ոչ պակաս 500-ը զինվորականներ էին, Սարիղամիշի բոլշևիկյան կազմակերպությունը նույնպես բացարձակ զինվորական գերակշռություն ուներ։ Նույնն էր դրությունը նաև Կարսում, Տրապիզոնում, Քութայիսում, Բաթումում, Ելիզավետպոլում և այլն։ Դրան ավելանում էր նաև հուլիսյան իրադարձություններից հետո ապակազմված և Կովկաս արտաքսված զորամասերի բոլշևիկ զինվորների թիվը։ Սեպտեմբերին կասպիական ռազմական նավատորմում եղած բոլշևիկ նավաստիների թիվը հասնում էր 266-ի։ Ընդարձակ ռազմաճակատում ցրված այս դգալի թվով բոլշևիկներ, որոնց ստույգ թիվը առայժմ պարզել հնարավոր չէ։ Համենայն դեպս, այն 7—800-ից պակաս չէր։

Համագումարը պետք է քննարկեր հետևյալ հարցերը. 1) զեկուցում կուսակցական համագումարի և կուսակցական կենտրոնի մասին, 2) զեկուցում տեղերից, 3) ընթացիկ մոմենտը, 4) Սահմանադիր ժողովը, 5) ագրարային հարցը, 6) կուսակցական մամուլը, 7) ագրարային հարցը, 8) կազմակերպական հարցեր, 9) ընտրություններ, 10) տարբեր հարցեր։ Բոլոր այդ հարցերը ուղղակի թե անուղղակի առնչվում էին գովկասյան բանակում հեղափոխական աշխատանքների ընդլայնման ու խորացման, բոլշևիկների գործունեության ծավալման հետ[3]։

Ֆ. Մախարաձեի բացման խոսքին հաջորդում է Ս. Քավթառաձեի ինֆորմացիոն զեկուցումը VI համագումարի մասին։ Լենինյան դիրքերից գնահատելով հուլիսյան իրադարձությունները, զեկուցողը նշում է, որ «հուլիսյան օրերը հիշեցրին ինկվիզիցիայի ժամանակները. ի դեպ ինկվիզիտորների և պահիճների դերը խաղացին էսեռա-մենշևիկյան առաջնորդները»[4]։

Համագումարը մեծ նշանակություն էր տալիս տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների զեկուցումներին։ Կովկասի գրեթե բոլոր խոշոր զինվորական կենտրոնները ներկայացվեցին այդ զեկուցումներում։

Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության աշխատանքը համագումարին ներկայացրեց Արկադի (Արշակ) Նազարի Աթաբեկյանը՝ երկրամասի փորձված, հմուտ կուսակցական գործիչներից մեկը։

Նա իր ելույթում նշեց, որ «Կոռնիլովշչինան շատերի աչքերը բացեց։ Եվ այժմ մեր կուսակցությունը, որը բուրժուական հակահեղափոխության և պաշտպանողական կուսակցությունների կեղծիքի և զրպարտության համար թիրախ էր, քայլ առ քայլ նվաճում է մասսաների համակրանքը և իր շուրջը համախմբելով բանվորներին ու զինվորներին, նշանակալից դեր է սկսում խաղալ հաստատուն կերպով վերելք ապրող հեղափոխական շարժման ղեկավարման մեջ»[5]։

Զինվորների և նավաստիների շրջանում Բաքվի բոլշևիկների կատարած աշխատանքների մասին հանգամանորեն պատմեցին ականավոր բոլշևիկներ Ռ. Ստուրուան և Ռ. Ջնելաձեն։ Կուսակցության VI համագումարից հետո անմիջականորեն ձեռնամուխ լինելով զինված ապստամբության նախապատրաստ-

3 Ռազմական հարցի հետ անուղղակիորեն առնչվող մի շարք կարևորագույն հարցերի, մասնավորապես ընթացիկ մոմենտի, ագրարային և ազգային հարցերի քննարկումը դուրս է ներկա հոդվածի խնդիրներից։

4 «Կավկազսկի ռաբոչի», № 166։

5 Նույն տեղում։

մանը, Բաքվի բոլշևիկները, լենինյան ցուցումներին համապատասխան, հոանդուն ջանքեր էին գործադրում ստեղծելու կարմիր գվարդիա։ Քաղաքի 80 հազարանոց բանվորական մարտական ջոկատը, 18 հազարանոց կայազորը և մեծ թվով նավաստիներ կարմիր գվարդիայի բազան էին հանդիսանում։ Կայազորը, որտեղ բոլշևիկների ազդեցությունը հատկապես ուժեղացավ կոռնիլովշչինայից հետո, բանվորների և զինվորների պատգամավորների սովետում ուներ 250 ներկայացուցիչ։ Բորիս Զնելաձեն, մասնավորապես կանգ առնելով կասպիական նավատորմի նավաստիների շրջանում բոլշևիկների գործունեության վրա, նշում էր, որ երկար ժամանակ էսեռների ազդեցության տակ գտնվող նավաստիները «կտրուկ կերպով հեռանում են» մանրբուրժուական դեմոկրատներից, որ նրանց շրջանում գործում էին 206 բոլշևիկներ[6]։

Կայազորում Բաքվի բոլշևիկների գործունեության ընդլայնմանն ու խորացմանը նպաստեց երկու հանգամանք. նախ այն, որ բոլշևիկները այստեղ Ստ. Շահումյանի գլխավորությամբ, առաջինը Կովկասում անջատվեցին մենշևիկներից, ստեղծեցին իրենց ինքնուրույն կազմակերպությունը, մամուլի իրենց օրգանները՝ «Բակինսկի ռաբոչի»-ն և «Սոցիալ-դեմոկրատ»-ը։ Այնուհետև, նրանք հասան բանվորների և զինվորների սովետների միավորմանը, դրանով իսկ բոլշևիկների առաջադրած հեղափոխական լոզունգների շուրջը համախմբելով քաղաքի աշխատավորական ուժերին, ամրապնդելով բանվորների հետ զինվորական մասսաների դաշինքը։

Բաքվի պրոլետարական զորեղ շարժումն իր բարերար ազդեցությունն էր ունենում կայազորի վրա։ Այդ տեսակետից առանձնապես նշանակալից էր Բաքվի բանվորների սեպտեմբերյան հզոր գործադուլը, ողջ երկրում նախահոկտեմբերյան շրջանի առավել նշանավոր պրոլետարական ելույթներից մեկը, որը վերջացավ ձեռնարկատերերի հետ կոլեկտիվ պայմանագրի կնքմամբ։

Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ Պ. Արվելաձեի զեկուցմանը մենք չենք հանդիպել լրագրային համառոտ հաշվետվություններում։ Սակայն Արվելաձեն, որպես համընդհանուր ճանաչում գտած հեղափոխական կայազորի ներկայացուցիչ, բազմիցս հանդես է եկել համագումարում, իր ելույթներում դրսևորելով կայազորի բոլշևիկյան տրամադրությունները։ Պետք է նկատել, որ կովկասյան բոլշևիկները ընդհանրապես մեծ ուշադրություն էին նվիրում Ալեքսանդրապոլին։ Թերևս դրա ապացույցներից մեկն այն էր, որ համագումարից անմիջապես հետո, Արվելաձեի հետ միասին, Ստ. Շահումյանը մեկնեց Ալեքսանդրապոլ՝ ծանոթանալու բազմահազարանոց կայազորի տրամադրություններին, օգնելու տեղական բոլշևիկներին, նվաճելու կայազորը, այն դարձնելու երկրամասում հնարավոր զինված ապստամբության հարվածային բռունցքներից մեկը։ Կարևոր էր համարվում հատկապես այն հանգամանքը, որ Ալեքսանդրապոլի կայազորը Թիֆլիսին համեմատաբար մոտ գտնվող առավել զորեղ բոլշևիկացած կայազորն էր։

Կարսի բոլշևիկների ներկայացուցիչ Ս. Սկարյուկինը նշելով, որ այնտեղ գործում է միասնական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, միաժամանակ տեղեկացնում է, որ կոռնիլովյան խռովության ջախջախումից հետո ստեղծված բարենպաստ մթնոլորտում բոլշևիկների ազդեցությունը որոշա-

6 Տե՛ս նույն տեղում, էջ 168։

կիրեն ուժեղացել է, որ ավելի ու ավելի է հասունանում անջատման և ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպության ստեղծման տենդենցը։

Պարզվում է, որ Կարսում ստացվում էին բոլշևիկյան «Կավկազսկի ռաբոչի» և «Ռաբոչա» թերթերը, մեծ քանակությամբ տարածվում էր կուսակցական-բոլշևիկյան գրականություն։ Կարսի բազմահազարանոց կայազորում էսեռները արդեն կորցրել էին իրենց երբեմնի տիրապետությունը։

Սարիղամիշի բոլշևիկների ներկայացուցիչ Կիասովը հույս էր հայտնում, որ բոլշևիկների հեղինակության արագ աճը կարող է սովետի վերընտրությունների ժամանակ բոլշևիկների համար ապահովել զգալի տեղեր։ Սարիղամիշում ևս բոլշևիկները մենշևիկների հետ միասին մի կազմակերպության մեջ էին։ Սակայն հաշվի առնելով կոռնիլովշչինայից հետո կատարված դասակարգային տեղաշարժերը, նա ասում էր, որ «պառակտումը անխուսափելի է»[8]։ Իրոք, բազմաթիվ փաստեր խոսում են այն մասին, որ Սարիղամիշի բոլշևիկները Ստ. Ալահվերդյանի ղեկավարությամբ գործնականում հանդես էին գալիս որպես ինքնուրույն կազմակերպության անդամներ, անհամեմատ ակտիվացնելով իրենց գործունեությունը կայազորում։ Կայազորը նվաճելու գործում հսկայական դեր խաղաց սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ռուսերեն լեզվով լույս տեսած «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որը լայնորեն տարածվում էր զինվորների մեջ։

Համագումարում Տրապիզոնի հեղափոխական կայազորն էր ներկայացնում Հայկ Հովսեփյանը, որը հանգամանորեն վերլուծեց տեղի բոլշևիկների գործունեությունը ցարիզմի տապալումից հետո։ Փետրվարյան հեղափոխությունը Տրապիզոնում ընդունվեց ցնծությամբ։ Սակայն այստեղի սովետում ևս երկար ժամանակ իշխում էին էսեռները։ Սկզբնական շրջանում սոցիալ-դեմոկրատիան բավականաչափ անկազմակերպ էր հանդես գալիս։ Ուշագրավ է, որ այստեղ բոլշևիկների դեմ էսեռների պայքարը տրադիցիոն, համառուսաստանյան ձևերի հետ մեկտեղ ուներ նաև իր յուրահատկությունը։ Դա այն էր, որ էսեռները բոլշևիկներին ներկայացնում էին որպես «բուրժուական» կուսակցություն և օգտվելով զինվորների քաղաքական հետամնացությունից, պատերազմից զայրացած զինվորների մի մասին հանում էին բոլշևիկների դեմ։ Տրապիզոնում և նրա շրջանում էսեռները երկար ժամանակ մեծ ազդեցություն ունեին։ Նրանք մեծամասնություն էին կազմում սովետում, հրատարակում էին իրենց «Վոենի լիստոկ» թերթը, որը «ոչ միայն բացահայտորեն հալածում էր բոլշևիկներին, այլև հեղափոխության հիմնական հարցերում գրավում էր «Ռուսսկոյե սլովո»-ից[9] ոչ լավ դիրք»[10]։ Հունիսյան հարձակման ժամանակ էսեռական սովետի գործկոմը պաշտպանելով կովկասյան բանակի ռեակցիոն հրամանատարությանը, ժամանակավոր կառավարությանը, պայքարում էր բոլշևիկների հակապատերազմական ելույթների դեմ։ Այդ շրջանում շատ բոլշևիկներ կանչվեցին սովետ և հարցաքննվեցին։ Հուլիսյան իրադարձություններից հետո բոլշևիկների դրությունը շատ ավելի ծանրացավ։ Փոստը տեղ չէր հասնում։ Բոլշևիկյան գրականությունն ու մամուլը փականքի տակ էին։ Այն ստացվում և համաձայնողական պարագլուխների կամքով ոչնչացվում էր։ «Մենք

7 «Կավկազսկի ռաբոչի», N 169, 10 հոկտեմբերի, 1917 թ.։
8 Նույն տեղում։
9 Ռեակցիոն մամուլի օրգաններից մեկը։
10 «Կավկազսկի ռաբոչի», N 169։

սնվում էինք էսեռների մարսած ու դուրս տված հոդեկան սնունդով» — ասում էր Հ. Հովսեփյանը[11]։ Վ. Ի. Լենինի, Մ. Գորկու և մի շարք ականավոր բոլշևիկների դեմ ռեակցիոն ուժերի, մասնավորապես Բուրցևի գրպարտությունից հետո, հեղափոխական կենտրոններից հեռու ընկած Տրապիզոնում, բոլշևիկների շուրջը չարության սև մթնոլորտ սաեղծվեց։ Այդ այն Բուրցևն էր, որի «լրտեսական» մեղադրանքների դեմ Մ. Գորկին գրեց՝ «թշվառ մարդուկ. դուք չէ, որ պիտի դատեք ինձ. ես 25 տարի երգել եմ իմ հայրենիքը, իսկ հայրենիքը դա ժողովուրդն է»։

Կոռնիլովշչինայի ջախջախումը Տրապիզոնում ևս բացեց զինվորական մասսաների աչքերը։ Դժվար չէր համոզվել, որ բոլշևիկները ճիշտ էին գուշակում իրադարձությունների զարգացումը, պաշտպանողականների դավաճանությունը։ «Կոռնիլովյան օրերը,— նշում էր Հովսեփյանը,— փոխեցին զորքերի տրամադրությունը մեր օգտին։ Անգամ էսեռների պաշտպանողական առաջնորդները դիմեցին մեր օգնությանը և պատասխանատու պոստերում որպես կոմիսարներ նշանակվեցին մեր ընկերները։

Մասսաները երես դարձրեցին էսեռներից։ Զինվորական մասսաները եկան դեպի մեր կազմակերպությունները»[12]։

Տրապիզոնի բոլշևիկները այլ ինտերնացիոնալիստների հետ մեկտեղ հրատարակում էին «Наш путь» թերթը։ Այն լույս էր տեսնում շաբաթը 2 անգամ, երկու հազար օրինակ տպաքանակով և, Հովսեփյանի վկայությամբ, «ավելի ու ավելի էր գրավում զինվորական մասսաների համակրանքը»։ Բոլշևիկները ձգտում էին միջոցներ գտնել թերթը ամենօրյա դարձնելու համար։ Եվ եթե այդ հաջողվեր, ապա, ինչպես ասում էր Հովսեփյանը, այն ժամանակ «վստահությամբ կարելի է ասել, որ մենք կդնքսենք էսեռական «Լիստոկ»-ին»։

Այստեղ ևս բոլշևիկները մենշևիկների հետ մի կազմակերպության մեջ էին։ Այդ միասնությունը ինչ-որ սպեցիֆիկ գծեր ուներ։ Հովսեփյանը վկայում է, որ մինչև կոռնիլովշչինան «մեր մենշևիկները միշտ սովետի նիստում հանդես են եկել բոլշևիկների պաշտպանությամբ»[13]։ Դա թերևս բացատրվում էր նրանց չափազանց փոքրաթիվ, մի տեսակ «ռնպաշտպան» լինելով, ինչպես նաև էսեռականության առավել շեշտված աջ դիրքով։ Սակայն նա ճիշտ էր նրկատում, որ մենշևիկների հետ միևնույն կազմակերպության մեջ լինելը, անկասկած, «թուլացնում էր հետևողական բոլշևիզմը», բայց և կոնկրետ միջավայրում զսպում էր նրանց պաշտպանողականությունը, ինչ-որ չափով նրանց ետ էր պահում համաձայնողականությունից։ Բոլշևիկների ունեցած ազդեցությունը շարքային մենշևիկներին մղում էր դեպի բոլշևիզմ։ Հովսեփյանը նկատում է, որ «պառակտումը հասունանում է, բայց մենք չենք ցանկանում առաջ անցնել իրադարձություններից։ Քայլ առ քայլ կազմակերպությունը դառնում է բոլշևիկյան։ Կուսակցական ժողովում ընդունված «իշխանությունը սովետներին» լոզունգը, առանց մեր կողմից որևէ հնշման, աջակցություն կգտնի մասսաների կողմից»[14]։

---

11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։
13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։

Կիզավետպոլի բոլշևիկների ղեկավար Ա. Մռավյանը իր զեկուցման մեջ նշում էր այն կարևոր փաստը, որ դեռևս Հոկտեմբերի սկզբներին ս.-դ. կազմակերպություն պատակտվեց. Փոքրաթիվ մենշևիկները հեռացան նրանից։ Դժվարին պայքարում, քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ, դաշնակների, էսեռների ու մենշևիկների և այլոց դեմ հանդես գալով, բոլշևիկները նվաճեցին 1200 ձայն և դումայում 3 տեղ գրավեցին։ Ինչ վերաբերում էր կայազորին, ապա Մռավյանը այն կարծիքն էր հայտնում, որ «կայազորի տրամադրությունը բոլշևիկների օգտին է. կարելի է ընդլայնել աշխատանքը»[15]։

Այլ վայրերի ներկայացուցիչների զեկուցումներից տեղեկանում ենք, որ Տուապսեում, չնայած ս.-դ. կազմակերպությունը միացյալ էր, բայց իշխում էին բոլշևիկները, որ այնտեղ էս ստեղծվում էր կարմիր գվարդիա, որի կազմում արդեն ցուցակագրվել էին 100 հոգի[16]։ Բաթումի բանվորական և զինվորական սովետում բոլշևիկները ունեին 15 տեղ՝ «Մարտյան սոցիալիստները», հատկապես էսեռները, դեռևս տիրապետող էին, բայց ս.-դ. կազմակերպությունը աճում էր[17]։ Դժվարին դրություն էր ստեղծվել Եկատերինոդարում, որտեղ բոլշևիկները գործում էին «կազակության ատելության պայմաններում»։ Կոռնիլովյան դավադրությունից հետո հակահեղափոխությունն այստեղ ավելի էր ակտիվացել։ Սակայն նկատելի էր նաև հակառակ պրոցեսը։ Ուշագրավ է, որ մունիցիպալ ընտրությունների շրջանում այստեղ բոլշևիկները քաղաքային դումայում նվաճեցին 16 տեղ։ Ողջ Հյուսիսային Կովկասում բոլշևիկներին, նրանց համակրող զինվորական մասսաներին հաջողվեց մեկուսացնել հակահեղափոխական սպայության կողմից հրահրվող ելույթները և ձերբակալել շատ կոռնիլովական սպաների։ Կազակությունը ինքը ևս պառակտվում էր։ Աշխատավոր կազակները հեռանում էին միացյալ-կազակային մտայնությունից, գնում էին դեպի բոլշևիզմ։ Կիսլովոդսկի պատգամավոր Ֆիգատները նշում էր, որ բոլշևիկների ազդեցությունը զգալի չափով աճել է։ Գորիի բոլշևիկների ներկայացուցիչ Ավակովը զեկուցում էր, որ այնտեղ բոլշևիկները ստեղծել են իրենց ինքնուրույն կազմակերպությունը։ Նրանց հեղինակության աճմանը ուղեկցում էր էսեռա-մենշևիկյան կուսակցությունների հեղինակազրկումը։

Համագումարում փայլուն ելույթ ունեցավ հուլիսյան իրադարձություններից հետո վերակազմված և կովկասյան ռազմաճակատ արտաքսված պետրոգրադյան 1-ին գնդացրային բոլշևիկյան գնդի զինվոր Գերվազիյ Կիվկուցանը։ Նա հանդես է գալիս հիշյալ գնդի Կովկասում գտնվող բոլշևիկների և նրանց հետևող հազարավոր զինվորների անունից։ Կովկաս հասնելուն պես Գ. Կիվկուցանի անունը հայտնի դարձավ զինվորներին։ Նա հաճախակի հանդես էր գալիս «Կավկազսկի ռաբոչի»-ի էջերում, գրում էր բանաստեղծություններ, կրակոտ շնչով լի հոդվածներ, կովկասյան բանակին էր փոխանցում հեղափոխության օրրանի՝ Պետրոգրադի բանվորների և զինվորների պայքարի փորձը։ Համագումարում ունեցած իր ելույթում նա դնում է բանակում բոլշևիկյան կուսակցական կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտության հարցը։ Նա համագումարին պատմում է Պետրոգրադում հուլիսյան օրերի իրականությունը, որպես բուռն իրադարձությունների անմիջական մասնակից, նա դայ-

15 Նույն տեղում, Ֆ 168.
16 Տե՛ս նույն տեղում.
17 Տե՛ս նույն տեղում.

բույլով է մերժում բոլոր այն սուտն ու հերյուրանքը, թե իբր հեղափոխական զինվորներն են առաջինը կրակել, «քաղաքացիական պատերազմ սկսել»։ Նա արտաբսված հազարավոր զինվորների անունից հավաստիացնում էր կովկասյան բոլշևիկների համաժողովին, որ իրենք պատրաստ են ծառայելու պրոլետարական հեղափոխությանը։

Իր ելույթում Կիվկուցանն ասում էր. «Ես հայտարարում եմ, որ ուր էլ որ մեզ նետի ճակատագիրը, մենք սրբությամբ կպահենք պրոլետարիատին երբեք չդավաճանելու մեր երդումը և ինչպիսի վտանգ էլ ուզում է լինի անվախ կպաշտպանենք հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի սուրբ գործը»[18]։

Բանվորների և զինվորների պատգամավորների սովետներում բոլշևիկյան ֆրակցիաների առաջացման ու նրանց գործունեության մասին համագումարին զեկուցեց Թիֆլիսի սովետի բոլշևիկյան ֆրակցիայի ղեկավար Ն. Մ. Կուզնեցովը։

Վերլուծելով կոռնիլովյան օրերից հետո կենտրոնական և այլ սովետներում ստեղծված դրությունը, կուսակցական պայքարի նոր էտապը, Կուզնեցովը այն ուշագրավ դիտողությունն էր անում, որ «Այդ օրերին սովետների կառավարող կուսակցությունները գլուխները կորցրին ու թեկուզև առերես, ժամանակավորապես հանձնեցին իրենց դիրքերի մի մասը»[19]։ Դրանք հիմնականում հանգում էին. 1) Թիֆլիսի սովետը (մեր ուղղումներով հանդերձ) իշխանության հարցում հանդես եկավ ընդդեմ կոալիցիայի, 2) սովետների ճնշող մեծամասնությունը դեմ արտահայտվեց մահապատժին, 3) ընդունեց բոլշևիկների առաջարկը՝ հակահեղափոխության դեմ պայքարի նպատակով ստեղծելու բանվորական միլիցիա[20]։

Համագումարում բանակի համար մղվող պայքարը սերտորեն առնչվեց նաև Սահմանադիր ժողովի վերաբերյալ հարցի քննարկման հետ։ Նկատի ունենալով հարցի հրատապ լինելը, համագումարի բացման նախորդ օրը ՌՍԴԲԿ Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեն, համագումարի պատգամավորների հետ միասին, որոշեց այդ հարցը և Գ. Կորգանովի հարակից զեկուցումը լսել համագումարի աշխատանքների սկզբում[21]։ Այդ հարցում համագումարի ճնշող մեծամասնությունը պաշտպանում էր լենինյան տեսակետը, այն է. օգտագործել նախընտրական կամպանիան՝ մասսաներին պարզաբանել բոլշևիկյան ծրագիրը, մերկացնել համաձայնողական կուսակցություններին, նպաստավոր առիթը բաց չթողնել մասսաներին զինված ապստամբության կազմակերպելու համար։

Բոլշևիկները բնավ էլ մեծ հույսեր չէին կապում Սահմանադիր ժողովի հետ։ Մինչև հոկտեմբերյան իրադարձությունները նրանք պաշտպանում էին խաղաղ ճանապարհով ամբողջ իշխանությունը սովետներին անցնելու գաղափարը, սովետները հենարան ծառայեցնելու պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակին հասնելու համար։ Կոռնիլովշչինայից հետո նրանք իշխանության նվաճումը կապում էին հաղթական զինված ապստամբության միջոցով ամբողջ իշխանությունը բոլշևիկյան սովետներին հանձնելու հետ։ Համագումարում, Շահումյանը պաշտպանելով երկրամասում Սահմանադիր ժողովի նախընտրական կամ-

18 Տե՛ս նույն տեղում, N 169։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։
21 Տե՛ս «Կովկասյան ռաբոչիյ», N 163։

պանիային բոլշևիկների ակտիվ մասնակցության տեսակետը, գրել է, «Կհրավիրվի Սահմանադիր ժողով թե ոչ, այն կարող է կանգնել բաղաքացիական պատերազմի փաստի առաջ։ Մեր ծրագիրը լայնորեն ծավալելու նպատակով մենք պետք է օգտագործենք ընտրական կամպանիան»[22]։

Բանակային բոլշևիկներից Ալեքսանդրապոլի կայազորի ներկայացուցիչ Պ. Արվելաձեն, պահանջելով լուրջ ուշադրություն նվիրել Սահմանադիր ժողովի նախընտրական կամպանիային, ասում էր. «մեր խնդիրն է նախընտրական կամպանիայի ժամանակ մասսաներին կազմակերպել հեղափոխական պրոլետարիատի դրոշի շուրջը և անողոքաբար պայքարել մենշևիկների և էսեռների մանրբուրժուական պատրանքների դեմ»[3]։

Սահմանադիր ժողովի հարցի առնչությամբ կովկասյան բանակում բոլշևիկների գործունեության մասին հարակից զեկուցմամբ հանդես եկավ Գր. Կորզանովը։ Նրա այդ զեկուցումը, ագրարային հարցի առթիվ նրա ելույթների հետ մեկտեղ, բացառիկ կարևոր նշանակություն ունեն կովկասյան ռազմաճակատում կոռնիլովշչինայից հետո ստեղծված դրությունը հասկանալու, բանակում բոլշևիկների գործունեության դժվարությունները և նրանց առաջ կանգնած նոր խնդիրները ըմբռնելու տեսակետից։ Դա փաստորեն հաշվետվություն էր տրված համագումարին՝ կովկասյան բանակում բոլշևիկների գործունեության վերաբերյալ։ «Զինվորների տրամադրության մեջ,— ասում էր Կորզանովը,— նկատվում է ս.-դ. բոլշևիկների համար նպաստավոր ուժեղ բեկում։ Զինվորները մասսայաբար սկսում են հրաժարվել էսեռների, մենշևիկների համաձայնողական տակտիկայի պատրանքներից. զինվորները հեռանում են նրանց կուսակցությունների շարքերից, հեղափոխական տրամադրությունները ուժեղանում են. մասսաները տարերայնորեն գալիս են դեպի ս.-դ. բոլշևիկների հեղափոխական տակտիկան»[24]։ Նա ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ զինվորական մասսաների բոլշևիկացմանը զուգընթաց չի թուլանում ռեակցիան բանակում։ Ավելին. «բարձր հրամկազմը բոլորը հակահեղափոխականներ են, կոռնիլովականներ. սպայական կազմը առավելապես կադետներ են, մի մասը էսեռներ, (նրանց) համակրողներ և մենշևիկներ։ Ռազմաճակատում բոլշևիկները ձերբակալվում էին. մի մասը դատի է տրվել. բանակի երկրային սովետը բանակի հրամանատարի հետ միասին մի ընդհանուր քաղաքականություն է վարում։ Բոլշևիկյան մամուլը և խոսքը հետապնդվում են. «Կավկազսկի ռաբոչի»-ն ոչնչացվում և թույլ չի տրվում դեպի բանակ, անգամ մերձթիկունքային կետերը»[25]։

Ռազմաճակատի տարբեր հատվածներից գրված զինվորական նամակները ևս հաստատում էին Կորգանովի փաստարկումներն ու հետևությունները։ Այդ կարգի փաստաթղթերից դիմենք միայն մեկին։ Ռեշտից (Պարսկաստան) Ա. Կաչանովը, Պետրոգրադ իրենց տուն հասցեագրած նամակում այսպես էր ներկայացնում սեպտեմբեր-հոկտեմբերին բոլշևիկների նկատմամբ կիրառվող հալածանքը, որի մեջ բնավ երկրորդական դեր չունեին էսեռները ու մենշևիկները։ «Կոմիտեները... սկսել են պաշտպանել արյունախումներին։ Թերթեր ստացվում

22 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 514։
23 «Կավկազսկի ռաբոչի», № 170։
24 Նույն տեղում, № 169։
25 Նույն տեղում։

են միայն բուրժուական՝ «Գոլոս կրասնովո Սովետս» անվամբ. ուրիշ որևէ թերթ չեն թույլատրում։ Նոխկինում ստացվում էին և Մոսկովյան, և Բարվի (թերթեր — Հ. Մ.), իսկ այժմ էլ չեն գալիս։ Բոլշևիկների ծրագիրը ոչ մի կերպ չի կարելի ձեռք բերել. կոմիտեները համոզում են, որ նրանք ընդհանրապես ծրագիր չունեն. ողջ կոմիտեն մենշևիկյան է. ահա և քեզ կարգ. ով ինչ, ով ինչպես կարող է և ով ինչ ցանկանա։ Այդ պատճառով էլ շատ դժվար է»[26]։

Այսպես էր դրությունը Կովկասյան ռազմաճակատում Սահմանադիր ժողովի նախընտրական կամպանիայի շրջանում։ Կորգանովը, այդ ամենը հաշվի առնելով, միանգամայն ճիշտ էր գուշակում, որ «այդպիսի պայմաններում ռազմաճակատում, նախընտրական ժամանակաշրջանում պետք է սպասել բոլշևիկների ագիտացիայի ապատության սահմանափակումներ և կծկումներ, մանավանդ որ բանակի հրամանատարին, կոմիսարին և բանակային կոմիտեներին (մի շարք զորամասերի կողմից բոյկոտի ենթարկվող) իրավունք է վերապահված ժողովների հրավիրման կարգ սահմանել։ Ավելին, պետք է սպասել ընտրական կանոնների ամենախորը խախտումներ, անգամ նողկալի մեքենայություններ կուսակցական ընտրական փաստաթղթերի և թեկնածուական ցուցակների նկատմամբ»[27]։ Եվ եթե մենք ցանկանում ենք օբյեկտիվորեն գնահատել Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքները Կովկասում և մասնավորապես կովկասյան բանակում, ապա չի կարելի անտարբեր անցնել Կորգանովի այդ կանխազգացումների կողքից։

Վերոհիշյալից ելնելով էլ Կորգանովը նշում էր, որ նախընտրական կամպանիայի շրջանում չի կարելի հույս դնել ճակատային և այլ ընտրական հանձնաժողովների վրա, որ այդ պատճառով էլ անհրաժեշտ է ստեղծել ինքնուրույն ընտրական հանձնաժողով, որպեսզի հրամանատարությունից, երկրային սովետից, էսեռա-մենշևիկյան կուսակցություններից անկախ ռազմաճակատում հաջողությամբ տարվի ընտրական կամպանիան, նախապատրաստվեն անհրաժեշտ բոլոր նյութերը. ժամանակին դրանք ուղարկվեն ռազմաճակատ։ Այդ նպատակին անմիջականորեն պետք է ծառայեն ագիտացիոն դասընթացները։ Նրանց ունկնդիրների միջոցով անմիջականորեն ռազմաճակատ պետք է ուղարկվի նախընտրական և ընդհանրապես կուսակցական գրականություն։ Եվ որքան հնարավոր է այդ գրականությունը պետք է շատ լինի։ Զորամասերում գործող բոլշևիկների առաջ խնդիր էր դրվում մյուս կուսակցությունների նման հասնել նրան, որպեսզի տվյալ զորամասի տնտեսական միջոցների հաշվին հատկացումներ կատարվեն հօգուտ բոլշևիկյան ագիտացիայի։ Հաշվի էր առնվում նաև, որ զինվորները իրենք ևս նյութապես կաջակցեն բոլշևիկներին։

Կորգանովը պահանջում էր բոլշևիկյան մամուլի օրգաններում պարզաբանել ընտրությունների կարգը, Սահմանադիր ժողովի հետ կապված քաղաքական հարցերը, տարբեր կուսակցությունների ակնկալությունները նրանից, նրա շուրջը ծավալվող դասակարգային պայքարի իմաստը և այլն։ Ուշագրավ էր Կորգանովի այն հարցադրումը, որ պետք է աշակցել զինվորների այն պահանջին, որպեսզի մինչև ընտրությունները ագիտացիոն նպատակներով գյուղ ուղարկվեին զիտակից զինվորները։ Զինվորները ռազմաճակատում հաճախ բոլ-

26 ԿՊՄ-ՊԱ (Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ), ֆ. 1300, ց. 1, գ. 99, 2-րդ մաս, թ. 765։

27 «Կավկազսկի ռաբոչի», № 169։

շևիկներին հարցնում էին. «ինչ անել, եթե Սահմանադիր ժողովի կազմը հակաժողովրդական լինի»։ Գուսսկցությունն լենինյան զծին լիովին համապատասխան, Կորգանովը ասում էր, որ նման զինվորներին «մենք՝ բոլշևիկներս պատասխանում էինք, որ այդ դեպքում նոր հեղափոխությունը անխուսափելի է»[28]։ Կորգանովը նույնպես այն տեսակետն էր պաշտպանում, որ Սահմանադիր ժողովի հարցին պետք է մոտենալ հեղափոխության շահերի տեսանկյունից, որ պետք չէ պոտրանքներ տարածել, թե իբր ողջ պայքարը տարվում է հանուն նրա, և որ Սահմանադիր ժողովը իրոք ի վիճակի կլինի լուծելու ժամանակի կենսական հարցերը։ Նա պահանջում էր ակտիվացնել սովետների՝ «հեղափոխության հենարանների» գործունեությունը։

Համագումարում Կորգանովը ծավալեց երկրային սովետի գործունեության սուր քննադատություն։ Նա նշում էր, որ «զորամասերը արդեն պահանջում են բանակային համագումարի հրավիրում. նրանք բացահայտորեն չեն վստահում էսեռա-մենշևիկյան երկրային սովետին»[29]։ Համագումարի անունից պահանջվում էր անհապաղ հրավիրել բանակային երկրորդ համագումար, որը «միակն է, որ կարող է երաշխավորել նախընտրական ժամանակաշրջանում ագիտացիայի անհրաժեշտ ազատություն»։ Ելնելով բանակի բոլշևիկացման բուռն պրոցեսից, որը հատկապես խորացավ կոռնիլովյան դավագրության ձախողումից հետո, Կորգանովը, բանակի ու երկրամասի այլ աչքի ընկնող բոլշևիկ գործիչները, արդարացիորեն կարծում էին, որ նորմալ ընտրությունների պայմաններում, բանակային սպասվող համագումարում բոլշևիկները ձեռք կբերեին կայուն մեծամասնություն։ Այդ էին վկայում բանակի բոլշևիկացման պրոցեսի խորացմանը վերաբերող բազմաթիվ փաստերը ինչպես թիկունքային զորամասերում, այնպես էլ ռազմաճակատում։

Առաջարկվում էր պահանջել երկրային սովետից անհապաղ և վճռական միջոցներ ձեռք առնել կանխելու այն հալածանքը, որը հուլիսյան իրադարձություններից ի վեր կիրառվում էր բոլշևիկների, նրանց համակրողների, մամուլի ու գրականության նկատմամբ։ Ամբողջ սրությամբ գրվում էր «Կավկազսկի ռաբոչի»-ի վրա դրված արգելքը վերացնելու պահանջը։

Կորգանովը և համագումարի պատգամավորները լավ գիտեին, որ «մամուլի ազատության նոր դահիճները»՝ Էսեռներն ու մենշևիկները չեն իրագործի այդ պահանջը։ Դա սոսկ մերկացնող նպատակ էր հետապնդում։ Չի կարելի համաձայնվել ոմանց այն տեսակետի հետ, թե երկրային սովետին ներկայացված նման պահանջը «ինքնախաբեություն էր... ոչինչ չարժեցող թուղթ»[30]։ Այդ ասվում է, կարծես մոռանալով այն, որ Կորգանովը, լիովին բացահայտելով երկրային սովետի դավաճանությունը, նրա և կոռնիլովյան բարձրագույն հրամանատարության կամքի միասնությունը, նշում էր, որ միայն բանակային համագումարին կարելի կլինի վստահել ասենք Սահմանադիր ժողովի նախընտրական կամպանիայի անաղարտությունը։ Մոռացվում էր նաև այն, որ բոլշևիկների համագումարը պահանջում էր հակառակ երկրային սովետի գծի, նրա իսկ գլխի վրայով նախապատրաստել բանակային երկրորդ համագումարի հրավիրումը, տեղերում անողոքաբար մերկացնելով էսեռա-մենշևիկյան դավաճաններին։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

30 Տե՛ս М. В. Церцвадзе, Революционное движение в Грузии в 1914—1917 годах, Թբիլիսի, 1960, էջ 237։

Սկզբունքային նշանակություն ունեին Կորգանովի զեկուցման մեջ առաջադրված թեզիսները՝ կովկասյան բանակում բոլշևիկյան ինքնուրույն կազմակերպությունների ստեղծման վերաբերյալ։ Կովկասյան բանակում բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծումը մինչև հոկտեմբեր հետաձգելը կովկասյան բոլշևիկների լուրջ սխալն էր։ Հյուսիսային, Արևմտյան և այլ ռազմաճակատներում այդպիսի կազմակերպություններ ստեղծվեցին ցարիզմի տապալումից անմիջապես հետո։ Այդ փաստը ինքնին նշանակում էր խզում համաձայնողականությունից, պաշտպանողականությունից։ Կովկասյան բոլշևիկները զինվորական կուսակցական կազմակերպությունների ստեղծման հնարավորությունը ձեռքից բաց թողեցին սկսած բանակային 1-ին համագումարից՝ բանակում դեռևս թույլ ազդեցություն ունենալու, թե որևէ այլ պատճառով, սխալմամբ, ենթարկվեցին էսեռա-մենշևիկյան կուսակցությունների կամքին, իսկ հետագայում չհամարձակվեցին «դրժել» իրենց խոստումը։ Նրանց այդպիսի սխալ վարքագիծը, ըստ էության, համընկավ Օգակոմի ցանկությունների հետ։ Հիշենք, որ ժամանակավոր կառավարության այդ անդրկովկասյան օրգանը իր առաջին կոչերից մեկում պահանջում էր. «բոլոր ուժերով մենք պետք է աջակցենք մեր բանակի միասնությանը, թույլ չտալով, որ նրա մեջ կազմվեն առանձին զինվորական կազմակերպություններ կուսակցական կամ ազգային հողի վրա։ Հիշեցե՛ք, քաղաքացիներ, որ զորքի ուժը նրա միության մեջ է»[31]։ Էսեռներին ու մենշևիկներին ինչ-որ չափով այդ հարցում հաջողվեց բոլշևիկներին ծուղակի մեջ գցել համագումարում, նրանցից երաշխիք ստանալ, որ կուսակցական կազմակերպություններ չեն ստեղծի, այնինչ իրենք ազատորեն սկսեցին գործել, անարգել տարածեցին իրենց մամուլն ու գրականությունը, ստեղծեցին իրենց զինվորական կազմակերպությունները։

Այժմ բոլշևիկների երկրային համագումարը ուղղում էր նախկին սխալը։ Այդ ուղղությամբ որպես գործնական ծրագիր Կորգանովը նշում էր, որ «բոլոր ընկեր բոլշևիկները, որոնք ռազմաճակատում մտնում են մենշևիկների հետ միացյալ կազմակերպությունների մեջ, պետք է իսկույնեթ պառակտվեն նրանցից, ստեղծեն ինքնուրույն կազմակերպություններ... Անհրաժեշտ է կուսակցական ռազմական կազմակերպությունների համագումարի անհապաղ հրավիրում՝ այդ կազմակերպությունների ամրապնդման և ընդլայնման համար...»[32]։

Նախատեսվում էր համագումարը հրավիրել հոկտեմբերի 17-ին։ Համագումարում պետք է հաստատման ներկայացվեր կուսակցության զինվորական կազմակերպությունների կանոնադրությունը, երկրային կոմիտեին կից պետք է ընտրվեր զինվորական կուսակցական կազմակերպությունների երկրային ժամանակավոր բյուրո։ Նույն այդ համագումարում պետք է առաջադրվեր Սահմանադիր ժողովի բանակային թեկնածուների ցուցակը, որը իր հերթին պետք է հաստատվեր երկրային կոմիտեի կողմից։

Կորգանովի զեկուցմամբ, համագումարում մի շարք առիթներով նրա և բանակային այլ պատգամավորների ելույթներով փաստորեն ի մի էր բերվում բոլշևիկների գործունեությունը կովկասյան բանակում և նշվում էին նրա մերձավոր և ապագա խնդիրները։ Այդ հիմքի վրա էլ համագումարը ընդունեց կով-

31 ՀՍՍՀ ՊԿԱ. ֆ. 313, գ. 1, թ. 70։
32 «Կավկազսկի ռաբոչի», Ա 169։

կասյան բանակին վերաբերող կարևոր որոշումներ։ Դրանցից մեկը վերաբերում էր «Կովկասյան երկրամասի և ռազմանավատորմի ՌՍԴԲԿ բոլշևիկյան զինվորական կազմակերպությունների կանոնադրության նախագծի» ընդունմանը։ Սահմանվում էր, որ այդ նախագիծը ենթակա էր վերջնական քննարկման և հաստատման կուսակցական զինվորական կազմակերպությունների երկրային համագումարում։

Կանոնադրության նախագծի՝ «նպատակները և խնդիրները» բաժնում նշվում էր, որ բոլշևիկների կուսակցության զինվորական կազմակերպությունը համապրոլետարական կազմակերպության մի մասը լինելով, իր առաջին և գլխավոր նպատակն է համարում՝ «գերապանցապես գյուղացիական չքավորությունից և բանվորներից կազմված զինվորական միջավայրում հեղափոխական սոցիալիզմի նույն սկզբունքների և գաղափարների պրոպագանդումն ու տարածումը, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տակտիկական լոզունգների, ծրագրային պահանջների պարզաբանումը»[33]։ Մատնանշելով բանակին առավելապես հետաքրքրող կենսական հարցերի լուծման ուղիները, այն կապելով զինված ապստամբության հետ, նախագիծը գտնում էր, որ իմպերիալիստական պատերազմին կարելի է վերջ տալ միայն հեղափոխական ճանապարհով, որ «ազգարարային հարցում արմատական ռեֆորմները Ռուսաստանում կարող են իրագործվել միայն բուրժուազիայի և կալվածատերերի դեմ պրոլետարիատի և գյուղացիական չքավորության նոր, ավելի վճռական գոտեմարտի պայմաններում»[34]։ Կարևոր տեղ էր հատկացվում էսեռա-մենշևիկյան վարքագծի գնահատմանը, նշվում էր, որ նրանց համաձայնողական, մանրբուրժուական տակտիկան լիովին ձախողվել է, և որ այդ կուսակցությունները փաստորեն բուրժուազիայի և կալվածատերերի ձեռքին պայքարի գործիք են դարձել ընդդեմ պրոլետարիատի և գյուղական չքավորության։ Դրա հետևանքն էր այն, որ «բանվորները, զինվորներն ու գյուղացիները արմատախիլ անելով պաշտպանողական էսեռների և մենշևիկների կուսակցությունների դավաճանական բազաբականությամբ տարածված պատրանքները, մտնում են հեղափոխական պրոլետարական կուսակցության շարքերը»[35]։ Ժամանակի կարևորագույն խնդիրներից մեկն էր համարվում «հեղափոխության համար կազմակերպված ռազմական հենարանի ստեղծումը՝ կենսագործելու համար իր կողմից գրված պահանջները ի շահ բանվորների և գյուղացիական չքավորության»[36]։

Այսպիսի պարզ ու որոշակիորեն գրված հարցադրումների առկայության պայմաններում անհասկանալի է, թե ինչու որոշ պատմաբաններ ձգտում են նվազեցնել կովկասյան բոլշևիկների երկրային առաջին համագումարի նշանակությունը, գրելով, թե իբր համագումարը չէր պաշտպանում զինված ապստամբության գաղափարը, չէր մշակում այն իրագործելու կոնկրետ ուղիները, ձեռնամուխ չէր լինում զինված ջոկատների ստեղծմանը և այլն[37]։ Միթե՞ բանակում ամուր բոլշևիկյան հենարանի ստեղծումը չէր նշանակում հեղափոխու-

---

33 «Резолюции Кавказского Краевого съезда РСДРП (большевиков)», *Թիֆլիս, 1917, էջ 12։*

34 *նույն տեղում։*

35 *Նույն տեղում։*

36 *Նույն տեղում։*

37 *Տե՛ս Ս. Վ. Յերզյան, նշված աշխատություն, էջ 233։*

թյան համար ռազմական ուժի ստեղծում։ Միանգամայն այլ հարց է՝ ստեղծված այդ ուժի ճիշտ, խելացի օգտագործման հարցը վճռական պահին, վճռական տեղում։

Նախագծի 2-րդ «Կանոնագրություն» բաժնում սահմանվում էր, որ զինվորական բոլշևիկյան կուսակցական կազմակերպության անդամ կարող էր լինել բանակում ծառայող յուրաքանչյուր ոք, ով ընդունում էր կուսակցության ծրագիրը, ենթարկվում էր նրա բոլոր որոշումներին, երկու կոմունիստների ներաշխավորությամբ մտնում էր կուսակցության կազմակերպություններից մեկի մեջ, մուծում էր անդամավճար։ Զինվորական կազմակերպությունը իրեն չէր անջատում կուսակցությունից, այլ ենթարկվում էր ողջ կուսակցության ու երկրամասային կազմակերպության կանոնադրական պահանջներին։

Կովկասյան բոլշևիկների համագումարում բանակին վերաբերող երկրորդ կարևոր հարցը «Բանակում Սահմանադիր ժողովի ընտրություններին նախապատրաստվելու հարցի առիթով» բանաձևն էր[38]։

Կովկասյան բանակում նախընտրական կամպանիայի ողջ պատասխանատվությունը համագումարը դնում էր զինվորական կազմակերպությունների երկրային ժամանակավոր բյուրոյի վրա։ Բոլոր զորամասերում անհապաղ պետք է ստեղծվեին «կուսակցական ընտրական հանձնաժողովներ»։ Նախընտրական կամպանիան և զինվորական կուսակցական կազմակերպությունների ստեղծման պրոցեսը դիտվում էր որպես մեկ միասնական երևույթի տարբեր կողմեր, որպես իրար հետ սերտորեն կապված հարցեր։ Պահանջվում էր, որպեսզի զորամասերում, գրուժիններում, բանակային հիմնարկներում կուսակցության բոլոր անդամները իսկույն գուրս գային մենշևիկ պաշտպանողականների հետ գործող միասնական կազմակերպություններից և կանոնադրության վերոհիշյալ նախագծին համապատասխան ստեղծեին ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություններ՝ Զինվորական երկրային բյուրոյի ղեկավարությամբ։ Համագումարը նախընտրական կամպանիայի ժամանակաշրջանում թույլատրում էր բլոկ միայն «ինտերնացիոնալիստական խմբերի և հոսանքների հետ... եթե այդպիսիք լինեին»[39]։

Բանաձևը զինվորական կուսակցական կազմակերպությունների համագումարի խնդիրը համարում էր այդ կազմակերպությունների ստեղծումն ավարտելու և կազմակերպություններն ընդլայնելու հարցը։ Հաշվի առնելով այն դժվարությունները, որ հոկտեմբերի 17-ին նախատեսված այդ համագումարը կարող էր և չհրավիրվել, նշվում էր, որ նրա պատգամավորները կարող էին ՌՍԴԲԿ բոլշևիկների երկրային կոմիտեի հաստատմանը ներկայացնել Սահմանադիր ժողովի համար իրենց նախատեսած թեկնածուների ցուցակը։ Բանաձևը մերկացնում էր էսեռներին ու մենշևիկներին, մասնավորապես դնելով բոլշևիկյան մամուլի հոդվածները դադարեցնելու և բանակային հերթական համագումար հրավիրելու պահանջները։ Այդ ամենը էսեռա-մենշևիկյան բանակային երկրային սովետի մերկացում էր նշանակում և ոչ թե ակնկալություն այն բանի, որ հեղափոխությանը բացահայտորեն դավաճանած, ռեակցիոն հրամանատարության հետ միաձուլված այդ սովետը կարող էր իրոք կատարել բոլշևիկների պահանջը։ Այդ էր ապացուցում բանաձևի այն կետը, որ «Երկրային սովետի

38 Տե՛ս «Резолюции Кавказского Краевого съезда РСДРП (б)», стр. 6—7.
39 Նույն տեղում, էջ 6։

կողմից վերջին երկու պահանջների բավարարումից հրաժարվելու դեպքում զորամասերում կուսակցական կազմակերպությունները (բոլշևիկյան — Հ. Մ.) իսկույնևեթ պետք է ագիտացիա մղեն բանակային համագումար հրավիրելու մասին, անկախ Երկրային սովետից»[40]։ Անհրաժեշտ էր համարվում ագիտացիոն դասընթացներում զինվոր-կոմունիստների լայնորեն ընդգրկումը, նախընտրական կամպանիայի շրջանում գիտակից զինվորներին ագիտացիոն նպատակներով գյուղ ուղարկելու համար։

Կորգանովի զեկուցմանը համապատասխան կազմված բանաձևը կուսակցական զինվորական կազմակերպությունների և նրանց անդամների կարևոր գործն էր համարում՝ «հենվելով բանակում գյուղացիական չքավորության լայն մասսաների վրա», վճռական պայքար մղել զինվորների քաղաքացիական իրավունքների ոտնահարման, ագիտացիայի սահմանափակման, բանակում բոլշևիկների ու նրանց մամուլի հալածանքի դեմ։ Հաշվի էր առնվում, որ բռնությունները անխուսափելի կլինեն բոլշևիկների նկատմամբ, կոպիտ կերպով կխախտվի ընտրական կարգը, ուստի համագումարը բոլշևիկներին ու հեղափոխական զինվորներին զգոնության, այդ կարգի երևույթների դեմ պայքարի էր կոչում։

Եթե նախընտրական կամպանիայի շրջանում բոլշևիկների ֆինանսական միջոցները չափազանց սուղ էին, ապա էսեռների ու մենշևիկների համար իրենց ոսկու պարկերն էին բացում բուրժուազիան, ինչպես նաև պետական բանկը՝ բանակի հրամանատարության միջոցով։

Բանաձևը բխում էր կուսակցության VI համագումարի համապատասխան որոշումից, որտեղ Ջափարիձեի առաջարկությամբ հատուկ կետ ընդունվեց, որպեսզի Կենտկոմին կից զինվորական կազմակերպությունը իսկույնևեթ ձևռնամուխ լինի բանակում և մանավանդ ռազմաճակատում կուսակցության տանելիք նախընտրական աշխատանքների պլանի մշակմանը։

Երկրային համագումարում զինվորական հարցի առթիվ ընդունված որոշումները լիովին համապատասխանում էին զինված ապստամբության կուրս վերցրած կուսակցության VI համագումարի և ոգուն և ուղղակի որոշումներին։

Г. С. МЕЛИКЯН

ВОПРОСЫ РЕВОЛЮЦИОННОГО ДВИЖЕНИЯ В АРМИИ НА ПЕРВОМ КРАЕВОМ СЪЕЗДЕ КАВКАЗСКИХ БОЛЬШЕВИКОВ (ОКТЯБРЬ 1917 г.)

Резюме

В период нового общереволюционного подъема, который начался после разгрома корниловщины, был созван Первый Краевой съезд большевиков Кавказа. Он сыграл огромную роль в сплочении и активизации революционных сил как на Кавказе, так и в Кавказской армии.

На съезде были представлены все основные центры Кавказского военного округа и фронта (Тифлис, Баку, Александрополь, Карс, Сары-

40 Նույն տեղում, էջ 5։

камыш, Трапезунд, Елизаветополь, Туапсе, Екатеринодар, Батум, Шерифхане и др.).

Завершая курс Шестого съезда партии Краевой съезд обобщил результаты большевистской работы в армии после свержения царизма. Разобравшись в создавшейся обстановке, которая сложилась после разгрома корниловщины, наметил новые, принципиально важные задачи.

На съезде полностью была раскрыта контрреволюционная роль Краевого армейского Совета, который вместе с реакционным командованием старался задушить большевизм в армии.

Приняв решение о скорейшем созыве Второго армейского съезда, особое внимание съезд уделил подготовке и проведению предвыборной кампании Учредительного собрания в армии.

Было вынесено решение о немедленном создании большевистских организаций в войсковых частях и принят Проект Устава военно-партийных организаций, который должен был быть утвержден на предстоящем съезде военно-партийных организаций Кавказской армии.

Этим принципиально важным решением была исправлена грубая ошибка со времен Февральской революции, когда большевики Кавказа ошибочно подчинились решениям Первого армейско-эсеровского съезда (апрель-май 1917 г.) и упустили из рук создание военных большевистских организаций.